ՀԱՆԳԻՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ
(1894—1961)

Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը «սրտի խորունկ վշտով» Վեհափառ Հայրապետին ուղղված իր հուլիս 17 թվակիր հեռագրով հաղորդում էր գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի մահը, որը տեղի է ունեցել հուլիսի 17-ին, երկուշաբթի, Մայամիում (Ֆլորիդա, ԱՄՆ)։

Վեհափառ Հայրապետը, որը հովվապետական այցելությամբ գտնվում էր Ստամբուլում, հետևյալ ցավակցական հեռագիրն էր ուղղում Տ. Սիոն արքեպիսկոպոսին.

«Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի մահվան գույժը Մեր սիրտը լեցուց կսկիծով։ Մեր վերջին ողջույնը և օրհնությունը հանգուցյալին, որ երկար տարիներ նվիրումով և հավատարմությամբ ծառայեց Ս. Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Աստվածային ողորմություն, խաղաղություն և լույս իր բարի ու արդար հոգիին»։

Վեհափառ Հայրապետի հրահանգով, հուլիսի 23-ին Մայր Տաճարում կատարվում է Հոգեհանգստյան պաշտոն։

Հանգուցյալ սրբազանը ծնվել էր Թուրքիայի Զմյուռնիա քաղաքում 1893 թվականին։ Ավազանի անունը եղել է Արամ։ Նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային վարժարանում։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին անցնում է Կահիրե, ուր աշխատում է ֆրանսիական դրամատան մեջ։ Այնուհետև արձանագրվում է ֆրանսիական լեգեոնի մեջ որպես կամավոր։

1920 թվականին մտնում է Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանը՝ կուսակրոն հոգևորական դառնալու մտադրությամբ։

1921 թվականին սարկավագ է ձեռնադրվում, իսկ 1923 թվականին՝ աբեղա, օծակից ունենալով Տ. Կյուրեղ արքեպիսկոպոս Իսրայելյանին, ձեռամբ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունու։

1923 թվականին նորընծա աբեղա՝ նշանակվում է Յաֆայի հայոց Ս. Նիկողայոս վանքի ժամարար, ուր պաշտոնավարում է մինչև 1925 թվականը։

Այնուհետև 1925—1927 տարիներին պաշտոնավարում է Մարսելում, որպես հոգևոր հովիվ, գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի ձեռքի տակ, ուր և ստանում է մասնավոր վարդապետության աստիճանը։

1927 թվականին հրավիրվում է ԱՄՆ, որպես Յունիրն Սիտիի Ս. Խաչ եկեղեցու հովիվ։

1932 թվականին ծայրագույն վարդապետության աստիճան է ստանում Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանից, և ապա, վերջինի սպանությունից հետո, նշանակվում է առաջնորդական փոխանորդ ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմին։

21 1935 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնում Տ. Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսից։

21 1942 թվականին ընտրվում է Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ և պաշտոնավարում է մինչև 1946 թվականը։

21 1947 թվականին հրավիրվում է Լոս Անջելոսի Ս. Խաչ եկեղեցու հովվության։

1 1952 թվականին նշանակվում է Կենեկտիկուտի և Պետերսոնի եկեղեցիների հոգևոր հովիվ։

1 1954—1958 թվականներին ընտրվում է ՄԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ։

2 Հուլիսի 22-ին, շաբաթ օրը, եպիսկոպոսական Սեյնտ Ջան դը Դիվայն եկեղեցում կատարվում է հանգուցյալ սրբազանի վերջին օծման ու թաղման արարողությունը առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսի նախագահությամբ, որն իր դամբանականում անդրադառնում է հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի կյանքի և գործունեության վրա։

Դամբանական է խոսում նաև գերաշնորհ Տ. Սկեյֆ եպիսկոպոսը։

Հանգուցյալ սրբազանի աճյունը ամփոփվում է Ֆրոնքլիֆի գերեզմանատանը։

Հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը Հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից մեկն էր, սիրված իր ժողովրդից, հարգված օտար եկեղեցական շրջանակներից և գնահատված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։

Խաղաղությո՜ւն նրա հոգուն։